իւրեանս բաժին առնէին, թէ՛ խաչ և թէ սկիհ ի տունս իւրեանց արգելուին, ծախէին և ի հալոց տային(*)։ Զմի բարութիւնս ոչ տեսաք զնոցունց կամ զյիշատակս եկեղեցոյն և կամ զպայծառութիւն կամ զշինութիւն, այլ միայն զվերոյ ասացեալս բաղում իմասցիս եւեթ՝ զաղօտութիւն, զպակասութիւն եւ զնուազութիւն. և ի վերոյ այսր ամենայնի պարտ ի վերայ պարտուց եղեալ յինքեանց, եւ ի ձեռս բռնաւորացն բաղում անգամ զեկեղեցին կնքել տային եւ մնայր աւուրքք փակեալ, եւ անմեղ քրիստոնեայք եկեալ յաղօթս որ տեսանէին զայն, բախէին զկուրծս եւ դառնային։ Եւ զհասս եկեղեցոյն՝ խնկին եւ մոմին, մահուան եւ կենաց. կեղեքէին զանմեղ քրիստոնեայս եւ ի պիղծ սէրս իւրեանց, ի զբօսանս եւ ի գինէտունս ուտելով մսխէին եւ զուարճանային այնու դրամով(–)։ Եւ ի ժամանակ հարկապահանջութեան անկեալ ընդ իրեարս թէ Դու տո՛ւր զայն, և նայ՝ զայս, եւ ի կռուելն ընդ միմեանս զտուգանս անտի տային առ ի յաղթելոյ զմիւս կողմն(**)։ Նաեւ ի տարւոջ մի զմիրին ի ժողովրդենէն ժողովեցին. վասն որոյ ծեծս բաղում հայհոյութեամբ եթէ Քո ուտելն հերիք է եւ բաւ, ես եղեց աթոռակալ եւ երեսփոխան(***)։ Բանակ բանակ եղեալ զմիմեանս յաղթելոյ կային եւ ի նոյն սակին Պօղոսեանք և Ապողոսեանք վերնէին։ Ցայտ է այսոքիւք որ արիւն և թարախ, զի անիրաւութեամբ ժողովէն՝ ցրուի և անիրաւութեամբ, զի գործիք եւ արարմունք չէր իրաւունք եւ արդարու-

(*) Սուրբ Նիկողոսցիք։ (**) Սուրբ Գէորգցիք։
(***) և Պալատցիք։

(–) «Ոչ կամեցաւ նա իմանալ զբարի. զանօրէնութիւն խորհեցաւ յանկողնի իւրում. եկաց նա ամենայն ճանապարհ որ ոչ է բարի և ի չարէ նա ոչ ձանձրացաւ»։